երեխա և 6 /մայր/ծնող: Փառատոնին մասնակցել են այն շահառուները, ովքեր տեղահանվել են Արցախից:
Կենտրոնի թիմը, շահառուների հետ համատեղ ներկայացրել են տաղավար՝ ցուցադրելով իրենց կողմից պատրաստված ք. Գավառին բնորոշ ուտեստներ:
Այս միջոցառման նպատակն էր աջակցել ջրհեղեղի հետևանքով տուժած, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և տեղացի ընտանիքների սոցիալական ինտեգրմանը: Միջոցառումը հագեցած էր երգերով, պարերով, սպորտլանդիայով, մուլտհերոսներով և հետաքրքիր խաղերով, ազգային ուտեստների անվճար հյուրասիրությամբ: Միջոցառմանը մասնակցել են նաև Հայկական Կարիտասի շահառու երեխաները իրենց ծնողների հետ Գյումրիից, Վանաձորից, Գավառից և Արտաշատից՝ համախմբվելով և ստեղծելով ամուր ընկերական կապեր:

**Մեկօրյա ճամբար Սևանա լճի ափին:** Ս/թ օգոստոսի 9-ին Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի սաների համար կազմակերպված Ամառային ճամբարը Սևանա Լճի ափին բաղկացած էր հետևյալ գործողություններից՝

- Ուխտագնացություն դեպի Սևանի թերակղզի, Սևանավանք վանական համալիր
- Ջոկատների բաժանում, թիմային աշխատանք
- Լողափնյա հանգիստ
- Ջրային և ցամաքային խաղեր
- Համատեղ ուտեստների պատրաստում և ճաշակում
- Երեկոյան խարույկ
- Պարային մրցույթներ

Ճամբարին մասնակցել են **15 շահառու երեխա 8 աղջիկ, 7 տղա**:

**Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաներ**

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված է եղել **2** հաշմանդամություն ունեցող երեխա/տղա/:

1 ծահառուի մոտ ԲՍՓՀՄԱ թիվ 6 բաժնի կողմից սահմանվել է <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակը հինգ տարի ժամկետով՝ Աուտիզմ:
1 շահառուի մոտ սահմանվել է <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակը մինչև երեխայի 18 տարեկան դառնալը:
Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են եղել **21** երեխա, ովքեր ունեն հատուկ կարիքներ, ինչպիսիք են՝

- *Սելեկտիվ մուտիզմ, գերզգայունություն -**1** երեխա/ աղջիկ/*
- *Ինտելեկտուալ հապաղում, մանկական տարիքի էմոցիոնալ, վարքային խանգարում-**1** երեխա /տղա/*
- *Լեզվական խնդիրներ -**6** երեխա /**3** տղա, **2** աղջիկ/*
- *Տարբերական հիվանդություն – **3** երեխա /**1** աղջիկ, **2** տղա/*
- *Քրոնիկ գաստրիտ-**1** երեխա /աղջիկ/*
- *Հեռատեսություն -**1** երեխա /**1** տղա/*
- *Հիպերմետրոպիա, համագործակցվող շլություն-**1** երեխա/աղջիկ/*
- *Անբավարար փարթամություն-**1** երեխա/տղա/*
- *Թեթև մտավոր հետամնացություն-**4** երեխա/տղա*